

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվարի 2016 թվականի N 9-Ն

ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ԺԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐՂՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ-ԾՐԱԳԻՐ 3 ԼԱՆՋԻԿ-ԳՅՈՒՄՐԻ ԺԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ՀՂԴԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2013 թվականի նոյեմբերի 7-ին (Երևան) և 2013 թվականի նոյեմբերի 18-ին (Լյուքսեմբուրգ) ստորագրված «Հայաստանի «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ֆինանսական պայմանագրի պահանջներով և Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի-ծրագիր 3-ի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

Հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի-ծրագիր 3 Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Հ. Աբրահամյան

2016 թ. հունվարի 19
Երևան

[Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
հունվարի 14-ի N 9-Ն որոշման](#)

Եվրոպական ներդրումային բանկ
Վարկ No 82.634 AM

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագիր-Ծրագիր 3
ԼԱՆՋԻԿ-ԳՅՈՒՄՐԻ (27.4 կմ)
(ԿՄ 90+200-117+670)

ՀՂԴԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
(ՀՕՏԾ)

19 Հունիսի 2015

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՏԿՆ)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան